

մոմեր, զորոնք պատրաստած էր ինքը այն ա-
րուեստով, զոր սորված էր Երուսաղէմ գըտ-
նուած Ժամանակ: Բայինդուր բէկ, որ առա-
ջին անգամ կը տեսնէր սպիտակ մոմ, չատ
մեծ հրճուանք զգաց. եւ ըսաւ թէ կը վե-
րապահէ զանոնք Շահին ընծայելու. այս
խորհուրդը հաճելի երեւցաւ Խանին, եւ խըն-
դրեց որ իր մոմերն ալ ի միասին ընծայ տանի
Շահին: Մովսէս եպիսկոպոս երբ լսեց այս
որոշումը, աւելցուց անոնց վրայ իւր կողմէն
ալ ուրիշ եօթը մոմ: Բայինդուր բէկ վերա-
դարձին ընծայեց Շահին այդ 21 մոմերը, որոնք
չատ հաճելի անցան նորին վեհափառութեան
եւ հարցուց թէ ի՞նչ ծագումէ են անոնք. եւ
երբ լսեց թէ Մովսէս եպիսկոպոս պատրաս-
տած է զանոնք, հրովարտակ զրկեց անմիջա-
պէս Երեւանի Խանին, ուր կ'ըսուէր. «2Մով-
սէս անուամբ վարդապետն, որ բնակի ի քում
քաղաքի առ քեւ փութանակի առաքեսցես զնա
առ իս, եւ ուր եւ իցեմ ես՝ եկեալ գտցէ զիս»
(Դաւր. 298—300):

Թէ ի՞նչ նպատակով էր հրաւէրս, չէր
բացատրուած. պզտոր խորհուրդներ պաշա-
րեցին վարդապետը. բայց եւ այնպէս աներ-
կիւղ եւ անյապաղ ինկաւ ճանապարհ. «զնա-
ցեալ եհաս սրբազան հեղինակս ի Դուռն ար-
քայի ի ... ՌՀԵ (1626) ամի». այսպէս ըստ
Ղուկաս Գառնեցւոյ: Առաքել կը գրէ, թէ
ճանապարհը հանեց զինքը Բաղդատ. «զի անդ
էր Շահ Աբաս Թազաւորն, զի կամէր զքա-